լանոց փոխեալ է Ռուսաց։ — Գ. ԹԱՊԱՍՍԱՐԱՆ որ է ԹԱԲԱՍՏԱՐԱՆՆ յիշատակեալ 'ի մերոց նախնեաց, յելից Քուրալայ կայ և 'ի հարաւոյ Դարբանդայ, առ Սամուրաւ և առ կասպիականաւ. Ռուպաս գետ խաղայ 'ի հովիտս լերանց նորա, որ բարեբերք են։ Բնակիչքն իբր 12,000 հնազանդք Ռուսաց, և այլք ազատք. գլխաւոր չէն Քուրալ՝ առ վտակաւ միով Ռուպասայ։

198. Դ. Բնիկ գաւառն ԴԱՐԲԱՆՏ յելից հիւսիսոյ Թապասսարանայ կայ, և յելից Քայթաքայ, 'ի հարաւոյ Թարքուի և 'ի մօտ ծովուն, ուրանօր դաշտանայ երկիրն առոգեալ 'ի Կիւմիւշ-չայ և Պօղան գետոց, որովք և պտղաբեր յոյժ գործի և հացաւէտ. 'ի սահմանս քաղաքին իբրև 8-900 պարտէզք են մրգոց, և պարարտ արօտք 'ի լերինս։ Անուանի է գաւառս այս վասն մեծի պահակին իւրոյ պարսպելոյ ընդդէմ սպառնակաց հիւսիսային ազանց լեռնականաց յ'2000 ամաց հետէ, և դրանցն մօտ յայս կամ յայն կողմն. վասն որոյ և 'ի գրաւ իմն բռնաց կարգեալ 'ի սկզբանէ ծանօթութեան վայրացն. մերթ 'ի նոցին հիւսիսայնոց նուաճեալ, 'ի Խազրաց և 'ի Հոնաց, և մերթ յԱղուանից և 'ի Հայոց, և ապա 'ի Պարսից, յետոյ յԱրաբացւոց և 'ի Թուրքաց, և ապա ուրեմն 'ի Վրաց և յԱղուանից, յետոյ դարձեալ 'ի Պարսից և յՕսմանեանց և 'ի Ռուսաց. որք միւսանգամ 'ի սկիզբն դարուս հանին զայն 'ի Պարսից, և կարգեցին յառանձին գաւառ զինուորական և ամրոց կողմնակալի զօրավարի. և են գաւառին 26 գեօղք. բնակիչք քաղաքայնովքն հանդերձ 40,000. յորս Հրեայք 3,000, Հայք 600. այլքն Պարսք և Արաբացիք ազգաւ։

199. Քաղաքն ԴԱՐԲԱՆՏ որ է Տէմիրգափու Թարգմանի Կապ-և-Դուռան (որպէս և ոմն 'ի նախնեաց մերոց ստուգաբանէ), անուանի է ընդ ամենայն աշխարհ վասն Դրանն և Պահակին Ճորայ, զորմէ անբաւ զրոյցք են առ արևելեայս, և ողջոյն գիրք (Տէրպէնտ-Նամէ). բազուկ մի Կովկասու յողնայարէն մեծ է ձգեալ 'ի Ճարոյ-Պելոգան կողմանց ձգի յայս կոյս ընդ արևելս մինչև մերձ 'ի ծովն, միջոց անձուկ թողեալ, ընդ որ անցք են դիւրին և միակ ընդ բովանդակ երկայնաձիգ պար լերանցն որ ընդ մէջ Պոնտոս և Կասբից ծովուց. միւս ևս անցից գոլով 'ի Տարիալ և այլ երրորդ անյայտ կամ անվարուն այժմ։ Արդ յայսմ միջոցի ընդ լեառնն և ընդ ծովն շինեալ է քաղաքն և Դուռնն, և 'ի մօտ կուռէ Պահակն, որ է պարիսպ երկուստեք 'ի ծովեզերէն ձգեալ 'ի լերինս իբր երից քառորդաց ժամուց ճանապարհաւ ընդ երկայնն, և վեց վայրկեան ընդ լայնն, և 'ի մէջ պարսպացն են Դրունքն, զոր նախ Հրուդենայ Դիւցազին Պարսից ասեն շինեալ (յամին 1650-1800 նախ քան զՔրիստոս). և ապա Աղեքսանդրի Մեծի եդեալ Դրունս երկաթիս, վասն որոյ և քաղաքն կոչի Տէմիր-գափու, Երկաթի Դուռն, և երկայնեալ ասեն զպարիսպն յարևելից 'ի մէջ ծովուն հարուստ ապարեզս, և յարևմտից ընդ լերինն ցանծանօթ սահման. այժմ երևին յայսմ կողման մնացուածք նորին ց'20 մղոն, և ուրեք ուրեք անդր ևս, որովք երևի մեծագոյն լինել քան զամենայն պարիսպ՝ յետ Չինացն, թէ և ոչ որպէս արևելեայք ոմանք ասեն՝ մինչև 'ի Սեաւ ծով ձգեալ ընդ բովանդակ պար լերանցն։ Պահակս այս ըստ անուան զանազան ազգաց մերձակայից և օտարաց կոչեցաւ Պահակ Ճորայ կամ Հոնաց, Դուռն Աղուանից կամ Հոնաց, Դուռն Խազրաց, Կապան Ձորայ, ևս և Դուռն Կասբից (յոր անուն կոն և այլ Դրունք), և Դուռն Ալանաց, այլ բնիկ Դուռն Ալանաց՝ Տարիալ է. Արաբացիք վասն կարևոր յարգի տեղւոյն՝ Դուռն Հաւատոյ՝ նա և Դուռն Դրանց (Պապ-իւլ-Էպվապ) անուանեցին։ Ի մերոցս պատմչաց յաճախակի կոչի Դուռն և Պահակ Ճորայ. և ինձ թուի սակս սկսանելոյ պարսպացն 'ի ՃՈՐ կամ ՉՈՂ մայրաքաղաքէ Աղուանից, որոյ տեղի հարկ է լինել 'ի Ճարոյ գաւառի Պելոգանայ (1), ուրանօր երևին իսկ հետք պարսպացդ։ Բազում անգամ ապստամբք զօրաց ոչ կարացեալք ընդ Դրանն մտանել և անցանել, խրամատեցին զՊահակն և անցին. այսպէս արար և արքայն Աղուանից Վաչէ առ Պերոզաւ 'ի կէս Ե դարու. որդի սորա Կաւատ նորոգեաց զայն, վասն որոյ և յիւր անուն կոչէր Ապդու-Կապատ. այլ առաւել ևս ամրացոյց նորին որդի Նուշիրեան Խոսրով 'ի Զ դարու. բայց յամին 628 Խազիրք կործանեցին ոչ սակաւ մասն 'ի պարսպացն և անցին ընդ Դուռնն. ընդ այն անցոյց զնոսա երկիցս և Հերակլ կայսր՝ ապստամբել յաշխարհն Պարսից. որք և յաւուրս տիրապետութեան Արաբացւոց՝ մերթ 'գրոհ տային ընդ այն և մերթ արգիլեալք լինէին։ Ի ԺԱ և ԺԲ դարս քրիստոնեայք 'ի բուռն արկին զքաղաքս և թագաւորք Հայք նստան 'ի նմա, որք և

(1) Երկիր այս ՃԱՐՈՅ-ՊԵԼՈԳԱՆ կամ ՊԵԼԱԳԱՆ կայ ընդ մէջ Կովկասու և Ալազան գետոյ, 'ի հիւսիսոյ արևմտից Շաքի նահանգի, և յելից հարաւոյ Թելաւայ կամ Կախեթու Վրաց նահանգի. նուաճեալ 'ի Ռուսաց, այլ ազատ օրինօք քաղաքավարեալ. երեք պետութիւնք և գաւառք են 'ի նմա, Ճարոյ-Պելագան, Ենիսէլ և Իլիսուի, որք 'ի հնումն մասն էին աշխարհին Աղուանից։ Գլխաւոր քաղաք բոլոր երկրին է Զաքաթալի 'ի Ռուսաց կառուցեալ և Պելաքան 'ի լերինս։ Ի հիւսիսոյ Զաքաթալեայ կայ 'ի լերինս Ճարաւան, զոր կարծեմ տեղի հնոյ ՉՈՂ մայրաքաղաքի Աղուանից որ և ՉՈՐ կոչի, ուր քարոզեաց նախ Ս. Եղիշէ առաքեալ Աղուանից, և անդ նստան յաջորդք Ս. Գրիգորիսի ցկէս Զ դարու. յորում ժամանակի թուի աւերեալ քաղաքին 'ի լեռնայնոցն, և անուան նորին մնացեալ 'ի վերայ Պահակին, որ և ցայս վայր թուի ձգեալ. մինչև ցայսօր գտանին 'ի վիճակին Ճարայ բուն Աղուանք, քանզի զուտիացի լեզուն խօսին։ Ապա Դարբանդ ոչ էր բուն Քաղաքն Ճորայ, այլ Քաղաք Պահակին Ճորայ, որպէս գրեն պատմիչք մեր հինք, բայց յետոյ սովորութիւն եղև կոչել զնա այնպէս, և զնա միայն։ — Ի մօտ Պելոգանայ կայ ՍՂՆԱԳ երկիր, մասն Կախեթու նահանգի Վրաց, յերբեմն տրոհեալ գաւառս, ընդ մէջ Ալազան և Իօռ գետոց, յՍղնամխար, 'ի Բուն Սղնագ և 'ի Շիրախ. մասն են և սոքա հնոյն Աղուանից, և կոչէին 'ի հնումն ԿԱՄԲԵՃԱՆ կամ ԿԱՄԲՃԻԿՔ, որպէս և ցարդ կոչի վիճակ մի Կամբէչովան, և ԲԱՂԱՍԱԿԱՆ ԴԱՇՏ, որ է խոպանն ընդ մէջ Կուրայ և Իօռայ. երկոքին ևս յիշին առ պատմիչս մեր։